

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի փետրվար ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի փետրվար ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը փետրվար ամսին ստացել է ընդհանուր քանակությամբ տասնութ բողոք: Ստացված բողոքներից տասը համաձայն օրենքի ենթակա չէին քննության Հաշտարարի կողմից: Չորսի քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում էին, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չէին ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Մնացած չորս բողոքները ներկայացվել են գրավոր տեսքով, համապատասխանում են օրենքով սահմանված պահանջներին և հետևաբար ընդունվել են քննության Հաշտարարի կողմից:

Քննության ընդունված չորս բողոքներից երկուսը կապված էին պլաստիկ քարտով կատարված գործարքների արդյունքում հաճախորդների հաշվից ավել գանձումների հետ, մեկ բողոքը՝ բանկի կողմից նախապես հայտարարված ավանդատեսակի պայմանները խախտելու, իսկ վերջին բողոքը՝ ապահովագրական ընկերության կողմից վնասը հատուցելուց հրաժարվելու հետ: Նշված պահանջները ներկայումս քննվում են Հաշտարարի կողմից՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Իսկ մյուս՝ Հաշտարարի կողմից քննության ենթակա բողոք-պահանջների հետագա ընթացքը ներկայումս վերահսկվում է Հաշտարարի գրասենյակի կողմից:

Ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	18
1. Ենթակա չեն քննության հաշտարարի կողմից	10
2. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	4
3. Ենթակա են քննության հաշտարարի կողմից՝	4
3.1 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկումատով կատարվող քարտային գործարքների) հետ	2
3.2 Կապված են բանկի կողմից ավանդային պայմանների փոփոխման հետ	1
3.3 Կապված են ապահովագրական ընկերության կողմից վնասի փոխհատուցումը մերժելու հետ	1

Հաշտարարին կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: